ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 10 >> 01 2013թ. N: 03-Կ **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՄԱՍԻԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ՀԱՐԹԵՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 226-րդ հոդվածի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ 2012 թվականի դեկտեմբերի 26-ի արձանագրությունը և հաշվի առնելով <<Ամասիայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի բացատրությունը.

Որոշում եմ՝

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Ամասիայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Կարինե Հարթենյանին հայտարարել նկատողություն:
2. <<Ամասիայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Հարթենյանին՝ մեկամսյա ժամկետում վերացնել ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված խախտումներն ու թերությունները:

Ա. ԳԻԶԻՐՅԱՆ

Բնօրինակի հետ ճիշտ է՝